

ժ. Գ. Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՍ ԳՏՆՎԱԾ ԱՆՏԻԿ ԱՄԱԿՈՒ ՄԻ ՔԱՆԻ ՆՄՈՒՇՆԵՐ

Հայաստանում հայտնաբերված և պետական պատմական թանգարանում պահվող անտիկ շրջանի ապակու հավաքածուն աչքի է ընկնում ձևերի, պատրաստման տեխնիկայի և գույների բազմազանությամբ: Այդ հավաքածուի լավագույն նմուշներից են լճաշենից, Սևանից և Քյուլիջա գյուղից հայտնաբերված ութանկյուն նիստերով սրվակները:

Լճաշենում կարասային թաղումից գտնված ութանկյուն կողերով սրվակը (քարձ. 5,5 սմ, լայն. 4 սմ, ոտքի լայն. 1,5 սմ, պսակի տրամ. 2,0 սմ) պատրաստված է մանուշակագույն թափանցիկ բարակ ապակուց՝ կաղապարի մեջ փշելու եղանակով (նկ. 1): Այն երկու կանոնա-



Նկ. 1.



Նկ. 2.

վոր, լայնացող մասերով իրար միացած ութանկյունիներից է կազմված, իսկ երկու կողքերի նիստերը զարդարված են երեք ուղիղ շրջաններով: Սրվակը հենվում է բառակուսուն մոտեցող ցածր ոտքի վրա: Գլանաձև ոչ երկար վիզը վերջանում է դեպի դուրս լայնացող պսակով, նույն գույնի երկու կանթերը մի ծայրով միացած են վզին՝ պսակի տակից, մյուսով հենված ուսերին: Նույն կարասում գտնված լճաշենի ութանկյուն սրվակը՝ Օզոստոս կայսեր արծաթյա դրամով, թվագրվում է մ. թ. ա. 1 դարի վերջով և մ. թ. 1 դարի սկզբով:

Սևանի լճափին եղած անտիկ դամբարանադաշտում, քարարկղային թաղումից հայտնաբերված ութանկյուն սրվակը (նկ. 2), որի կեսից պակաս մասն է մեզ հասել, վառ զեղնագույն² թափանցիկ բարակ ապակուց է և պատրաստված է նույն եղանակով, ինչ որ նախորդը:

1. Մանուշակագույնն ստացվում էր մարգանցի օքսիդի խառնուրդից:

2. Վառ զեղնագույնն ստացվում էր կադմիումի ծծումբ խառնելուց:

կազմի նիստի վրա արված է երկու ուռուցիկ շրջան: Պահպանվել է կանթներից մեկը, որը գույնավորված մուգ դեղնականաչավուն տարրերովում է սրվակից, Այն մի ծայրով կպած է նեղ գլանաձև վզի կենտրոնին, մյուսով, որը նման է բաղի թաթի, հենված է ուսին և որոշ շափով ծածկում է ութանկյան մեջ եղած ռելիեֆ շրջանների մի մասը: Վիզը վերջանում է դեպի դուրս լայնացող պսակով (պահպանված մասի բարձր, 5 սմ, կողքի լայն. 2,8 սմ, պսակի տրամ. 2,8 սմ):

Երկկանթանի ութանկյուն սրվակներ հայտնի են նաև ուրիշ վայրերից³, Մանուշակագույն, չավական հաստ ապակուց պատրաստված, կանաչավուն կանթերով ութանիստ մի սրվակ գտնվել է Պանտիկապեյում և պահվում է էրմիտաժում (Մ. 1903. 169), որն ըստ Ն. Զ. Կունինայի թվագրվում է մ. թ. I դարով: Վրաստանում, Մցխեթա-Սամթավրոյից, գտնված տարբեր գույնի հաստ և բարակ ապակուց պատրաստված ութանկյուն բոլոր սրվակներն էլ թվագրվում են II դարով և համարվում Սիրիայից ներմուծված⁴: Գ. Այգենը ութանկյուն սրվակները համարում է սիդոնյան և թվագրում է մ. թ. ա. և մ. թ. I դարերով⁵: Ռ. Սմիթը նույնպես ութանկյուն սրվակներն համարում է սիրիական, մասնավորապես սիդոնյան և թվագրում I—II դդ.⁶:

Ինչպես տեսնում ենք ութանկյուն սրվակների պատրաստման վայրը բոլոր ուսումնասիրությանն էլ համարում են Սիրիան, մասնավորապես Սիդոնը, անտիկ աշխարհի ապակեգործության ամենախոշոր կենտրոններից մեկը, իսկ դրանց արտագրության ժամանակը՝ մ. թ. ա. I մ. թ. II դդ. միջև ընկած շրջանը: Մենք գտնում ենք, որ Սեանի ութանկյուն սրվակը պիտի թվագրել մ. թ. I դարով, և ինչպես այս, այնպես էլ Նաշինից գտնված ութանկյունը նույնպես ներմուծված են Սիրիայից, շատ հավանական է Սիդոնից: Այս ենթադրության օգտին են խոսում նույն բարարկից գտնված մյուս երեք սրվակները, որոնցից մեկը պատրաստված է նույն տեխնիկայով, այսինքն, կաղապարի մեջ փշելու եղանակով, մուգ մանուշակագույն թափանցիկ ապակուց և ունի ձվաձև մարմին: Փորի վրայով անցնող երկու գույգ գծերի մեջ եղած գոտին զարգարված է գալարուն ռելիեֆ զարդերով, որից դեպի վիզն ու հատակն են ձգվում նույնանման ուղղահայաց գծեր: Սրվակը (բարձր. 8 սմ, վզի երկ. 2,4 սմ) հենվում է ցածր կլոր ոտքի վրա, գլանաձև ոչ երկար նեղ վիզը վերջանում է լայնացող պսակով: Երկու կանթերը մի ծայրով միացած են վզի կենտրոնին, իսկ բաղի թաթի նմանվող մյուս ծայրերով հենված են ուսերին (նկ. 3): Նման զարդերով կաղապարի մեջ պատրաստված մեկ և երկու կանթանի սրվակներ զգալի քանակությամբ հայտնաբերվել են Նայաետանի նաև ուրիշ վայրերում⁷ և այլ երկրներում: Գ. Այգենը այս սրվակները և, նախորդների նման համարում է սիդոնյան և թվագրում մ. թ. ա. և մ. թ. I դարերով⁸: Ռ. Սմիթը նույնպես համարում է սիրիական, մասնավորապես, սիդոնյան և թվագրում I—II դդ.⁹: Սիրիական, սիդոնյան են համարում նաև մյուս ուսումնասիրողները¹⁰, Կերպր, որն հատուկ ուսումնասիրության առարկա է դարձրել գալարուն գոտի ունեցող այդպիսի

³ A. de Ridder, Catalogue, Les terres cuites et les verres, T. VI, Paris, 1909, էջ 150, նկ. 285; Hall E. H., A collection of antique Glass, The Museum journal, vol. V, Philadelphia, 1913, նկ. 69.

⁴ Максимова М. И., Геммы из некрополя Мпхета-Самтавро, Вестник Государственного музея Грузии, т. XVI—В, Тбилиси, 1950, էջ 240, նկ. 56; Лордкипанидзе О., Ремесленное производство и торговля в Мухета в I—III вв. н. э., Труды Тбилисского Государственного Университета, т. 65, 1957, էջ 144 և հաջ. նկ. 7, 2; Угирелидзе Н. Н., Стекло в древней Грузии, Тбилиси, 1961, նկ. 7:

⁵ Eisen Gustavus A., Glass, vol. I, New York, 1927, էջ 254, 271, տախտ. 54:

⁶ Smith Ray Winfield, Glass from the Ancient World, New York, 1957, էջ 65, նկ. 87, 88:

⁷ Б. Аракелян, Гарни I, Ереван, 1952, տախտ. 25, նկ. 33; Гарни II, Ереван, 1957, տախտ. XVI, թվագրվում են I—II դդ.:

⁸ Eisen G. A., նշվ. աշխ., էջ 254, 271, տախտ. 54:

⁹ Smith Ray Winfield, նշվ. աշխ., էջ 61, նկ. 75:

¹⁰ Jahreshefte des österreichischen Archäolog'schen institutes in Wien, Band XII, Wien, 1909, էջ 84, նկ. 43; Froehner W., La verrerie antique description de la collection charnet, 1879 էջ 74, տախտ. IV, 16; Niessen Carl Anfton., Beschreibung Römischer Altertümer, Band I, II, Köln, 1911, էջ 60. № 1042; A. de Ridder, նշվ. աշխ. էջ 151, № 267; Hall E. H., նշվ. աշխ., նկ. 102:

որվակները, գտնում է, որ դրանք պատրաստել են մ. թ. I դարում սիրիական ապակեգործական կենտրոններում¹¹,

Սեստից հայտնաբերված գալարուն զարդերով, ձվաձև մարմնով մանուշակագույն սրվակը մենք համարում ենք I դարի սիրիական արտադրանք:



Նկ. 3.



Նկ. 4.

Նույն քարակղզից է գտնված, մանուշակագույն նուրբ ապակուց՝ ազատ փչելու եղանակով պատրաստված գնդաձև մարմնով սրվակը (նկ. 4), Այն ունի նեղ, կարճ վիզ, դեպի դուրս լայնացող պսակ, կանթը մի ծայրով կպած է պսակի տակից, մյուսով՝ բադի թաթի ձևի վերջավորությամբ, հենված է ուսին: Այդպիսի սրվակներ մեծ քանակությամբ գտնվել են Կիպրոսում. որոնք թվագրվում են I դարով¹²: Ուստի վերը նկարագրած մեր սրվակը ևս պիտի թվագրել մ. թ. I դարով:

Այգ կոմպլեքսի վերջին անոթը (նկ. 5) մուգ կանաչավուն¹³ ոչ թափանցիկ հաստ ապակուց ազատ փչելու եղանակով պատրաստված մի շիշ է: Շիշն ունի գրեթե գլանաձև մարմին, որը դեպի վիզը նեղանալով կազմում է թեք ուսեր, իսկ հատակը կլորավուն է: Նման ինքնատիպ ձևի շիշեր բացի Հայաստանից, որտեղ այդպիսիք մեծ թիվ են կազմում, և Անդրկովկասից, ուրի: աչ մի վայրում շին հանդիպում: Այդ հանգամանքը և մի շարք ուրիշ առանձնահատկություններ ինչպես դույնը, ապակու մասսիվությունը, ձուլվածքի անմաքրությունը, պղպղակների առկայությունը, քույլ ևն տալիս այդ խումբն համարել տեղական արտադրանք: Գտնվում հայտնաբերված այդպիսի շիշերը պրոֆ. Բ. Ն. Առաքելյանը թվագրում է I—II դդ¹⁴: Սևանի օրինակը կարելի է թվագրել I դարով, քանի որ ինչպես վերը տեսանք, նույն քարակղզից գտնված բոլոր ապակյա սրվակները համարվում են մ. թ. I դարի արտադրանք:

Քյուլիչայից, կարասային թաղումից հայտնաբերված ութանկյուն սրվակը (նկ. 6), մանուշակագույն քարակ ապակուց կաղապարի մեջ փչելու եղանակով է պատրաստված (բարձր. 6,5 սմ). բայց հակառակ նախորդների ունի թիչ արտահայտված ոչ կանոնավոր կողեր: Ութան-

¹¹ Kern J. H. C., A pair of mould-blown Glass amphorisks, 1 st century A. D., Oudheidkundige mededelingen uit het Rijksmuseum Van oudheden te Leiden, Nieuwe reeks XXXV, 1954, էջ 38 - 89, նկ. 9a—j.

¹² Vessberg O I of, Roman Glass in Cyprus, Opuscula Archaeologica, vol. VII, Lund, 1952, էջ 126 և հաջ., տախտ. V, 1, 2, 5, 10, տախտ. XV, 1, 2:

¹³ Կանաչ գույնն ստանում էին երկաթի և նիթրատի խառնելուց:

¹⁴ Б. Аракелян. Гарни I, տախտ. 24; Гарни II, տախտ. XV, նկ. 31:

կյունիների մեջ արված է վերը նկարագրված առաջին ութանիստի նման երեք ուղղանկյուն շրջաններու Դեպի դուրս լայնացող պսակով նեղ, երկար վիզը թևքված է մի կողմի վրա: Սրվակն, ի տարբերություն նախորդ ութանկյունիների, ունի մեկ կանթ, որի մի ծայրն ամրացված է վզին, մյուսը՝ բազի թաթի ձևով վերջացող, հենված է ոչ թև ութանկյուն կողի. այլ երկու



Նկ. 5.



Նկ. 6.

ութանկյունիների միացման տեղի վրա, իսկ մյուս կանթի փոխարեն գեոևս փափուկ վիճակում վիզը հարթ բռնիչով սեղմելու եղանակով արված է բարակ շերտ, որն ազավաղել է նրա տեսքը: Սրվակն անհավասար է ներկված, տեղ տեղ գրեթե անգույն է, իսկ որոշ տեղերում բավական մուգ: Ինչպես ուսումնասիրությունն է ցույց տալիս, Քյուլիջայի ութանիստ սրվակը փաստորեն խոտան է, ցածր որակավորման տեր արհեստավորի կատարած, մեծ վարպետության պատրաստված ութանկյունիների անհաջող ընդօրինակություն: Հետևաբար, հազիվ թե այդպիսի խոտանը արտադրվեր Սիրիայում, նամանավանդ ներմուծվեր այնտեղից, ուստի շատ ավանական է, որ ընդօրինակության փորձը կատարվել է տեղում I—II դդ., երբ նման սրվակները ներմուծվում էին դրսից:

Նույն կարասային թաղումից գտնված (Նկ. 7) մուղ կապտա-կանաչավուն գույնի կոնաձև մարմնով քիչ ներս սեղմված հատակով շիշը (բարձր. 10 սմ, հատակի լայն. 8 սմ, պսակի տրամ. 2,8 սմ) նույնպես տեղական արտադրանք պետք է նկատվի: Կոնաձև շիշն ունի աստիճանաբար նեղացող երկար վիզ և ուղիղ գեպի դուրս լայնացող պսակ: Ապակու խմորատիպ զանգվածը ցածրորակ է, որի հետևանքով խոշոր պղպջակներ են մնացել, գույնը համաչափ չէ իսկ պատերը և հատկապես հատակը (1 սմ.) շատ հաստ են, այդ պատճառով շիշը մասսիվ է ու ծանր: Շիշը փշելով չի պատրաստվել, այլ ձևավորվել է ձևորով, փափուկ վիճակում գլորելու, գլանելու միջոցով, իսկ մակերեսը հարթեցվել է բարև տախտակի վրա գլորելով¹⁵: Այդ

¹⁵ Այդ մասին տե՛ս Ի. Лурье, К. Ляпунова, М. Матье, Б. Пиотровский, Н. Флитнер. Очерки по истории техники древнего Востока, М—Л., 1940, էջ 338, նկ. 101. շատ նման է մեր օրինակին:

պիսի եղանակով կանաչավուն կոպիտ ապակուց պատրաստված Ուրբնիսից հայտնաբերված կոնաձև ցածր իրանով մի շիշ թվագրվում է II դ. 16, Քյուլիջայից հայտնաբերված շիշը նույնպես պետք է համարել I—II դարերի տեղական արտադրանք:

Այսպիսով, պարզվեց, որ քննության առած ուսակյա անոթների մի մասը ներմուծված է դրսից, այն է Սիրիայից, դրանք հիմնականում վերաբերում են կաղապարի մեջ փշված I դարերին պատկանող ռելիեֆ զարդերով սրվակներին:

Իսկ մյուս մասը պատրաստվել է տեղում I—II դդ.:

Ապակյա իրերն ու առարկաները մեծ կիրառություն ունենին անտիկ հասարակության կենցաղում: Աճող պահանջների բավարարմանն ու ապակյա անոթների մասսայական արտադրությանը մեծ շափով խթանեց փշելու տեխնիկայի հայտնագործումը, որի պատիվն ընդունված է վերագրել այն ժամանակվա ապակեգործության ամենախոշոր կենտրոններից մեկին՝ Ալեքսանդրիային: Այդ տեխնիկան, որն այնուհետև արագորեն տարածվեց միջերկրածովյան ավազանում մեծ շափով հեշտացնում և արագացնում էր արտադրության պրոցեսը: Չնայած, փշելու տեխնիկայի հայտնագործումը վերագրվում է Ալեքսանդրիային, սակայն ռելիեֆ զարդերով կաղապարի մեջ փշելու եղանակով պատրաստված սրվակներն առաջին անգամ արտադրվել են Սիրիայում: Ներմուծված կաղապարի մեջ փշելու եղանակով պատրաստված մեր սրվակների արտադրության ժամանակը համընկնում է Սիրիայում այդ տեխնիկայի կիրառմանը: Այսպիսով, հին աշխարհի ապակեգործության ամենախոշոր երկրներից մեկը՝ Սիրիան, ինչպես առաջին դարերում, այնպես էլ հետագայում Հայաստանին ապակյա անոթներ հայթայթող հիմնական կենտրոններից մեկն էր¹⁷, ինչը են ցույց տալիս Հայաստանում հայտնաբերված ապակու բազմաթիվ օրինակները, որոնք նաև վկայում են Սիրիայի և Հայաստանի միջև կատարվող աշխույժ առևտրի մասին, որն ավելի ինտենսիվ է դարձել I դարում, երբ իր բարձր զարգացման էր հասել համաշխարհային առևտուրը¹⁸:

Անտիկ աշխարհում կային ապակեգործ շրջիկ վարպետներ, որոնք ապակու արտադրություն էին կազմակերպում տարբեր երկրներում, ուր դրա համար պայմաններ կային: Հայտնի է, որ հին աշխարհի ամենախոշոր ապակեգործներից մեկը՝ էնեոնը, որն իր անունով անոթներ է արտադրել, տարբեր վայրերում իր արհեստանոցի բաժանմունքներն է ունեցել, իսկ կյանքի վերջին տարիներին իր բոլոր հիմնականները տեղափոխել է կայսրության մայրաքաղաք¹⁹: Շատ հնարավոր է, որ շրջիկ վարպետներ հաստատված լինեին նաև Հայաստանում, որն առաջին դարերում հանդիսանալով զորնդ և զարգացած երկրներից մեկը, չէր կարող չունենալ արտադրության այնպիսի մի կարևոր ճյուղ, ինչպիսին էր ապակեգործությունը: Տիգրան Մեծը և նրա հաջորդ Արտավազը հելլենիստական քաղաքներից տեղահանված մեծ թվով մարդիկ տեղափոխեցին Հայաստան՝ իրենց խոշոր առևտրաշատ քաղաքները բնակեցնելու և մարդաշատ



Նկ. 7.

¹⁷ Угрелидзе Н. Н. *Նշվ. աշխ.*, նկ. 13:

¹⁸ Илгэ Масаһін տես նաև Г. А. Тирациян, О торговых связях Армении с Сирией в античное время, Палестинский сборник, вып. 4(67), Москва, Ленинград, 1959; Р. В. Кинжалов, Ашнакский могильник, Труды Государственного Эрмитажа, том V, Ленинград, 1901.

¹⁹ Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954. էջ 95-97:

²⁰ Harden D. B. Romano-Syrian Glasses With mould-blown inscriptions *Journal of Roman Studies*, 1935, vol. XXV, p. II, էջ 163.

դարձնելու, Իսկ հին աշխարհում առևտրականներին և արհեստավորներին նախապատվություն էր տրվում:

Շատ հավանական է, որ այդ վերարձակիչների մեջ լինեին նաև ապակեգործներ: Ընդհանրապես պետք է նշել, որ Հայաստանի տնտեսական և մշակութային կապերը Սիրիայի հետ շատ սերտ են եղել: Այժմ մեր ձեռքի տակ եղած փաստերը անրավարար են տեղական ապակեգործության մասին ավելի որոշակի խոսք ասելու համար: Սակայն այդ սուղ փաստերն անգամ, ինչպես տեղական համարվող որոշ նմուշները, խոսում են դրա առկայության օգտին: Ապակեգործական արհեստանոցները սովորաբար լինում էին խոշոր քաղաքների ծայրամասերում, որոնց պեղումները դժբախտաբար մեզ մոտ դեռ չեն ձեռնարկված: Հուսանք, որ օրեցօր ծավալվող հնագիտական աշխատանքները հնարավորություն կտան նորանոր գյուտերով հարստացնելու մեր գիտելիքները հին հայկական քաղաքների նյութական արտադրության, արհեստների, դրանց թվում նաև ապակեգործության վերաբերյալ:

Ж. Д. Хачатрян

НЕКОТОРЫЕ ОБРАЗЦЫ АНТИЧНОГО СТЕКЛА НАИДЕННОГО В АРМЕНИИ

Р е з ю м е

Замечательными образцами античного стекла обнаруженного в Армении являются восьмигранные флаконы найденные в Лчашене, Севане и из села Гюлиджа.

Лчашенский флакон изготовлен из тонкого прозрачного фиолетового стекла посредством надувания в форме. Обнаружен он в кувшинном погребении и является импортом из Сирии. Датируется на основании серебряной монеты Августа I в. до н. э. и I в. н. э. (рис. 1).

Аналогичный флакон из желтого прозрачного стекла обнаружен в каменном ящике в Севане и сохранился в фрагментированном виде почти до половины (рис. 2).

Здесь же обнаружен фиолетовый двуручный флакон с яйцевидным туловом, украшенным поясом в виде спиралевидных завитков. Оба сосуда изготовлены вышеуказанным способом и также являются сирийским импортом и датируются I в. н. э. (рис. 3).

В рассматриваемом комплексе обнаружены еще два сосуда изготовленные посредством свободного дутья. Первый из них представляет собой одноручный кувшинчик с шаровидным туловом из фиолетового тонкого стекла (рис. 4). Второй представляет собой грушевидный флакон с четко отмеченными плечиками, изготовленными из темно-зеленого стекла (рис. 5). Последний по форме считается местным производством и датируется I—II вв. н. э.

Восьмигранный флакон из фиолетового прозрачного стекла найден в Гюлидже в кувшинном погребении. Он своей неправильной формой, слабо выраженными гранями, неравномерным цветом и кривой шейкой напоминает восьмигранные сосуды и по существу является браком производства (рис. 6). Вполне понятно, что такой сосуд не может служить предметом экспорта и был изготовлен на месте. Датируется он I—II вв. н. э. На месте изготовлен также стеклянный сосуд с коническим туловом, длинной шейкой и толстым дном (толщина 1 см) и стенкам, обнаруженный в том же погребении (рис. 7). Он изготовлен способом катания и датируется тем же временем.

Таким образом становится ясным, что часть рассматриваемого античного стекла Армении была привозной из Сирии, что свидетельствует о тесных культурных и экономических связях между Арменией и Сирией на рубеже нашего летоисчисления. Часть стекла рассматриваемого времени без сомнения изготовлялась на месте, что показывает низкий уровень развития стекольного производства древней Армении.